ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ։ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXX, № 5, 1977 г.

Ֆ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

Գիտության և տեխնիկայի աննախադեպ առաջընթացի մեր օրերում հույժ կարևոր է դառնում նաև մարդու և բնական միջավայրի փոխհարաբերությունների ուսումնասիրությունը։ Ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական գրականության մեջ հետազոտությունների նըպատակը բնագավառը անվանվում է «մարդու էկոլոգիա»։ Հոդվածում քննարկվում են մեթոդաբանական բնույթի մի քանի դրույթներ, որոնք կողմնորոշիչ նշանակություն կարող են ունենալ մարդու էկոլոգիային վերաբերող գիտական պրպտումների համար։

Վերջին ժամանակներս, հատկապես սկսած 60-ական թվականներից, ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական գիտական հրատարակություններում և հանրամատչելի գրականության մեջ բավական հաճախ կարելի է հանդիպել բնական միջավայրի կեղտոտման, դրա պատճառների և այդ պրոցեսի ակտուալ կամ հնարավոր վտանգավորության մասին հաղորդումներ։ Բնական միջավայրի պահպանման կենսական անհրաժեշտությունը ստիպում է կառավարություններին հատուկ միջոցներ հատկացնել այդ նպատակի համար, ձևակերպել մարդ-բնություն հարաբերությունը կարգավորող օրենքներ, կնքել միջպետական համաձայնագրեր։

Հանրամատչելի, ինչպես նաև հրապարակախոսական-քաղաքական գրականության մեջ բնական միջավայրի (մթնոլորտի, ջրի, հողի) աղտոտման, ինչպես նաև երկրի ընդերքի օգտակար հանածոների և էներգետիկ ռեսուրսների նվազման առկա իրադրությունը անվանվում է էկոլոգիական պրոբլեմ, երբեմն նաև էկոլոգիական ճգնաժամ։ Հասարակության և բնության փոխհարաբերության այդպիսի որակավորման օրինականությունը, կարծեք, հաստատվում է նաև մասնագետների կողմից [1]։

Խնդիրն, անշուշտ, տերմինի մեջ չէ, այլ այն գիտական բովանդակության, որն ըմբռնվում է տվյալ դեպքում մարդու էկոլոգիա անվամբ։

Բնության և հասարակության փոխհարաբերությունը հատուկ տեսանկյունով ուսումնասիրում են բազմաթիվ բժշկական, տնտեսագիտական և սոցիոլոգիական գիտություններ։ Մասնագիտական բաժանվածությունը թվարկված գիտությունների խմբերի, ինչպես նաև առանձին գիտությունների մեկուսացվածությունն այդ խմբերի մեջ, ծնում են հետազոտվող առարկայի մասին ոչ միասնական, երբեմն նաև հակասական պատկերացումներ, որոնք, բնականաբար, չեն կարող հիմք հանդիսանալ մարդկանց սոցիալական պրակտիկայի համար։ Մարդկային հասարակության գոյության և զարգացման կենսական պահանջմունքը պրակտիկայի այն հրամայականն է, որը ստիպում է մարդ-բնական միջավայր առարկայով զբաղվող գիտություններին միավորել իրենց ջանքերը և ստեղծել այդ առարկայի որքան հնարավոր է տոտալ ու միանշանակ գիտական մոդելը։ Որոշ մեթոդաբաններ գտնում են, որ գիտությունների այդպիսի կոորդինացիան (կոմպլեքսացումը) պրոբլեմային-

ժամանակավոր բնույթ չի կրում, այլ իր տենդենցի մեջ վեր է ածվում գիտությունների ինտեգրացման՝ նաև հասկացությունների միասնական համակարգի ստեղծման մակարդակով [2]։ Այս տեսակետն, անշուշտ, չի հակասում գիտության մեթոդաբանությանը, և ընդհանուր տեսքով նույնիսկ կանխատեսել է Կ. Մարքսը, որը XIX դարի կեսին գրում էր, թե գիտությունը այն ժամանակ կհասնի իր իդեալին, երբ բնագիտությունը կընդգրկի իր մեջ մարդու մասին գիտությունը [3]։

Հարկ է նշել, որ կապիտալիստական երկրներում որոշ հետազոտություններ, որոնք իրագործվել են սոցիալական էկոլոգիայի կամ մարդու էկոլոգիայի անվան տակ (հիմնականում սոցիոլոգների և քաղաքագետների, ոչ կենսաբանների կողմից) հայտնի են դեռևս մեր դարի 20-ական թվականներից։ Այդ հետազոտությունները հնարավոր չէ միանշանակ ձևով դրական կամ բացասական գնահատել (ինչպես որ փոքր-ինչ հախուռն ձևով արված է БМЭ-ում՝ հ. 34, Экология բառահոդվածի վերջամասում). արժեքավոր դիտումների և էմպիրիկ նյութի առկայությունը նրանցում զուգորդվում է սկզբունքորեն մերժելի տեսական-մեթոդաբանական պատկերացումների և ելակետերի հետ։ Այսպիսով, մարդու, հասարակության և բնական միջավայրի փոխհարաբերության գիտական ուսումնասիրության մեթոդաբանության անհրաժեշտությունը բխում է ինչպես պոզիտիվ, վերը նշված՝ գիտությունների ինտեգրացման միտումը իմաստավորելու պահանջմունքից, այնպես էլ՝ դրան օրգանապես կապված, գաղափարախոսական նկատառումներից։

Փիլիսոփայական մեթոդաբանության խնդիրը նկարագրված իրադրության մեջ բավական դժվար է, որովհետև, պատկերավոր ասած, մարդու էկոլոգիան, որպես գիտություն, դեռևս խանձարուրում էլ չի։ Եթե մի կողմ թողնենք այդ թեմային վերաբերող բազմաթիվ մերձգիտական և հրապարակախոսային արծարծումները, ապա, որպես մեթոդաբանական վերլուծության նյութ կարող են ծառայել ինչպես մարդու և բնական միջավայրի կապի մասին պրոբլեմային հարցադրումները, այնպես էլ այն հարուստ նյութը, որ մեզ ընձեռում է կենդանիների և բույսերի էկոլոգիան՝ իր մեթոդաբանական մոտեցումներով և տեսական կառուցումներով։

Ամեն մի նոր գիտություն չի ստեղծվում դատարկ տեղում։ Արդեն ձևավորված գիտություններից փոխառած բովանդակային և ձևային տարրերից բացի այն կամա թե ակամա ելնում է նաև որոշ մեթոդաբանական-աշխարհայացքային դրույթներից, որոնք բացահայտ կամ ինտուիտիվ ձևով կատարում են գիտական մտածողության կարգավորիչների իրենց դերը։ Յուրաքանչյուր գիտության համար անխուսափելի՝ ելակետային մեթոդաբանական այդ սկզբունքները ձևավորվում են մասնավոր գիտությունից դուրս՝ փիլիսոփայության մեջ և պատրաստի ձևով ներդրվում գիտության կառուցվածքում։

Փորձենք ներկայացնել այդ նախադրյալներից մի քանիսը՝ հավակնություն չունենալով, իհարկե, դրանք սպառել թե՛ էքստենսիվ, թե՛ ինտենսիվ առումով։

Առաջին մեթոդաբանական սկզբունքը մարդու էկոլոգիայի՝ որպես հատուկ գիտություն, առանձնացման օրինաչափության ընդունումն է։ Առաջին հայացքից սա, կարծեք, կոնկրետ գիտական հարց է, սակայն, ըստ էության,

այդ դրույթի հիմնավորումը դուրս է ամեն մի կոնկրետ գիտության իրավասությունից, որի հիմնավորումը պետք է փնտրել փիլիսոփայության մեջ։

Ըստ էության մարդու էկոլոգիայի մասին կարելի է խոսել միայն այնքանով, որքանով որ մարդը գիտականորեն կարող է քննարկվել որպես կենդանի լակ, որպես օրգանիզմ, որը միասնության մեջ է բնական միջավայրի հետ և վերջինիս բնութագրերի փոփոխությունները անհրաժեշտորեն արտացոլվում են մարդու կառուցվածքային-ֆունկցիոնալ հատկությունների փոփոխություններում։ «Հենց կենդանական աշխարհից մարդու ծագելու փաստով է պայմանավորված այն,— գրում է Ֆ. Էնգելսը,— որ մարդը երբեք լիովին չի կարող ազատվել կենդանուն հատուկ հատկություններից, որ, հետևաբար, խոսք կարող է լինել միայն այն մասին, թե այդ հատկությունները մեծ թե փոքր չափով են առկա, խոսք կարող է լինել մարդկայնության և կենդանականության տարբեր աստիճանների մասին» [4]։ Այլ կերպ ասած մարդու սոցիալական էության մարքսիստական ըմբռնումը ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է կենսաբանականի յուրահատուկ գոյությունը մարդու կենսագործունեության մեջ՝ սոցիալականին սուբորդինացված կամ՝ փիլիսոփայական լեզվով ասած, վերառնված ձևով։

Այդքանով էլ, հետևաբար, գիտական իմաստ ունի քննարկել մարդ-միջավայր կապը զուտ կենսաբանական առումով։ Չպետք է մոռանալ, սակայն, որ այդպիսի հետազոտության հենց սկզբում թույլ է տրված բավական ուժեղ իդեալիզացիա, որն էականորեն սահմանափակում է հետազոտության պոտենցիալ արդյունավետությունը։ Երբ չի գիտակցվում այդպիսի մոտեցման վերացական լինելու հանգամանքը՝ առաջ են գալիս բիոլոգիզմի բազմիցս մերժված կոնցեպցիաները՝ այս անգամ արդեն էկոլոգիայի թիկնոցով։

Մարդու՝ կենդանական աշխարհին պատկանելը, որն առօրեական գիտակցության համար միանգամայն բացահայտ ակնհայտություն է, այն ամենավերացական պնդումն է, որը կարելի է անել այդ առարկայի մասին փիլիսոփայության մեջ։ Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից այդ դրույթի կոնկրետացումը իրականացվում է հետևյալ կերպ։

Մարդու և բնական միջավայրի կապը երկու կետում սկզբունքորեն տարբերվում է կենդանու և նրա էկոլոգիական միջավայրի միջև եղած կապից։ Առաջին. ի տարբերություն կենդանու, որի կապը բնության հետ համեմատաբար կոշտ ձևով դետերմինացվում է ժառանգական ծրագրերով և դրանց վրա բարձրացող ժամանակավոր պայմանական կապերով, մարդու կապը բնության հետ առաջին հերթին որոշվում է այն արտադրող ուժերի բնույթով, որ նա որպես կուլտուրական ժառանգություն ստացել է, կամ ինքը ստեղծել։ Երկրորդ էական տարբերությունն այն է, որ մարդու ազդեցությունը բնության վրա (ինչպես նաև հակառակը) միջնորդավորված է ոչ միայն գործիքով, տեխնիկայով, այլև մյուս մարդկանց հետ ունեցած հասարակական հարաբերություններով։ Ճիշտ է, բուսական և կենդանական որոշ տեսակների ինդիվիդները իրենց հարաբերությունը էկոմիջավայրի հետ միջնորդավորում են ներխմբային հարաբերություններով, սակայն տարբերությունը հենց այդ միջնորդավորող հարաբերությունների սիստեմի բնույթի մեջ է։ Ընդհանուր ձևով ասած, եթե բնութագրենք կենդանու և մարդու հարաբերության տարբերությունը բնական միջավայրի նկատմամբ, ապա կենդանուն հատուկ է հարմարվողական էվոլյուցիան, իսկ մարդուն՝ բնության վերափոխումը՝ հա-

նուն այս կամ այն հասարակության առաջադրած կոնկրետ պահանջմունքների բավարարման։

Բուրժուական տեսաբանները էկոլոգիական պրոբլեմների պատճառը փնտրում են ազգաբնակչության աճի, մարդու ագրեսիվ էության և հատկապես գիտա-տեխնիկական առաջընթացի մեջ։ Ակնհայտ է, որ այստեղ շփոթանցված է վերոհիշյալ առաջին տիպի հարաբերությունները՝ արտադրող ուժերի զարգացման մակարդակը։ Սակայն նույնքան ակնհայտ է նաև, որ այդ արտադրող ուժերի (տեխնիկայի, գործիքների, այժմ նաև՝ դիտության) կիրառման բնույթն ու ուղղվածությունը մեծ չափով կախված է տվյալ հասարակության կազմակերպած արտադրության բուն նպատակներից, կամ այլ կերպ ասած, արտադրական հասարակական հարաբերություններից։ Այսինքն՝ մարդու էկոլոգիական պրոբլեմների ակունքը ո՛չ միայն և ո՛չ այնքան գիտա-տեխնիկական է, որքան սոցիալ-տնտեսական։ Որ էկոլոգիական պրոբլեմը ամեն մի հասարակության ներկայանում է որոշակի սոցիալական տեսքով, իր ընթացքի և լուծման որոշակի եղանակներով և այլն։

Նախորդ դրույթից հետևում է, որ մարդու էկոլոգիական հետազոտությունները ոչ միայն չեն կարող տարվել կենդանիների էկոլոգիային հար և նման, այլև չի կարող լինել համընդհանուր, վերապատմական և վերսոցիալական մարդու էկոլոգիա։

Կարևոր հարց է նաև օպտիմալ էկոլոգիական միջավայրի հասկացության՝ մարդու էկոլոգիայում կիրառելու մեթոդաբանական օրինաչափությունը։

Ամեն մի կենդանատեսակի, պոպուլյացիայի, բիոցենոզի համար այս կամ այն հավաստիությամբ հայտնի են էկոմիջավայրի բնութագրերի այն օպտիմալ արժեքները, որոնք լավագույնս ապահովում են պոպուլյացիայի գոյությունը և զարգացումը։ Ընդհանուր դեպքում դա անաղարտ բնությունն է՝ իր բիոտիկ և աբիոտիկ բաղադրատարրերի էվոլյուցիոն ձևով առաջ եկած համամասնություններով։

Մարդկային հասարակությունը, իր առաջացման իսկ օրից, բնության վրա թողած իր աշխատանքային-վերափոխիչ գործունեությամբ խախտում է բնական հավասարակշռությունը և, ինչքան զարգացած է հասարակությունը, այնքան այդ ակտիվ ազդեցությունը խորանում ու լայնանում է։ Այս իմաստով էլ նախաձին բնության ամեն մի նոստալգիա, կոչ՝ «հետ դեպի բնությունը», որպես կանոն, և՛ հետադիմական է, և՛ անիրագործելի։

Մյուս կողմից, ըստ մարքսիստական փիլիսոփայության, մարդու էությունը վերացական-անփոփոխ բան չի, որի համապատասխան էլ հնարավոր լիներ փնտրել կամ ստեղծել էկոմիջավայր։ Մարդը հասարակական հարաբերությունների ամբողջությունն է՝ մշտապես փոփոխվող և զարգացող, հետևաբար, և համապատասխան ձևով փոխվում են բնական միջավայրին առաջադրվող մարդկային պահանջները։ Հոմեոստազիսային կարգավորումը կենդանական էկոսիստեմներում արդեն չի կարող լիովին բավարար բացատրության սկզբունք համարվել, առավել ևս այն սահմանափակ կիրառություն կարող է ունենալ հասարակության և բնության կապի գիտական բացատրության գործում։

Մարդու էկոլոգիական պրոբլեմատիկան քննարկող գիտական հետազոտությունները՝ որպես իրենց անխուսափելի բաղադրիչ, պարունակում են

արժույթաբանական (аксиологический) գնահատումներ և պնդումներ։ Դրա հետ ևս անհրաժեշտ է հաշտվել, ի նկատի ունենալով, որ հետազոտության առարկան մարդկային գործունեությունն է, որը օբյեկտիվորեն իր մեջ ներառում է արժույթաբանական բնութագրեր։

Հատկանշական է այդ առումով այն անկումայնությունը և հոռետեսությունը, որը հատուկ է մարդու էկոմիջավայրի ժամանակակից վիճակի և նրա դարգացման հեռանկարի մասին բուրժուական մասնագետների հայացքներին։

Սոցիալիստական տնտեսակարգ ու քաղաքական կարգ ունեցող երկիրն, իհարկե, լիովին ապահովագրված չի էկոլոգիական բնույթի աննկարագրելի անակնկալներ առաջանալու հնարավոր վտանգից։ Եվ, եթե կարելի է այսպես ասել, էկոլոգիական լավատեսությունը, որն այդ բնույթի պրոբլեմների նկատմամբ ցուցաբերում է մարքսիստական աշխարհայացքը, ոչ թե իդեոլոգիական դոգմա է, այլ որոշակի սոցիալական կեցության գաղափարական արտացոլում։ Լավատեսությունն այդ հարցում հենվում է այն ռեալ տնտեսական, իրավաքաղաքական, բարոյա-գաղափարական հնարավորությունների վրա, որն ընձեռում է սոցիալիզմը։ Դա ամենից ավելի քիչ է նշանակում անհոգություն, իսկ իրականում՝ ստույգ գիտական պատկերացումների վրա կառուցված հետևողական «էկոլոգիական» քաղաքականություն, որի վերջնական նպատակը հասարակության անդամների բարեկեցության հարաճուն բարձրացումն է և նրանց բազմակողմանի զարգացումը։ Հենց այդ վեհ նպատակին ծառայելու մեջ է մարդու էկոլոգիային վերաբերող կոնկրետ գիտական և մեթոդաբանական ուսումնասիրությունների իրական արժեքը։

Երևանի պետական բժշկական ինստիտուտ,
փիլիսոփայության և գիտական
կոմունիզմի ամբիոն

Ստացված է 15.II 1977 թ.

Ф. А. КАРАПЕТЯН

НЕКОТОРЫЕ МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ЭКОЛОГИИ ЧЕЛОВЕКА

Резюме

Проблема сохранения оптимальной природной среды человека является одним из мощных импульсов для интеграции естественных, технических и общественных наук и создания новой науки—экологии человека. В статье проводится методологический анализ некоторых философских и общетеоретических предпосылок, непосредственно относящихся к этому направлению научных поисков.

Методологическая правомерность экологического подхода к соотношению человека и природной среды вытекает из марксистского понимания сущности человека, которая в снятой форме в себе сохраняет биологическое начало. В такой же мере ограничивается и применение понятия оптимальной экологической среды (разработанное в экологии

растений и животных) для осмысления проблем экологии человека. Обосновывается также методологическое положение о том, что проблематике экологии человека с необходимостью присуща ценностная направленность, обусловленная в конечном счете социально-классовой структурой общества.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Шварц С. С.* Вопросы философии, 9, 1974.
2. *Новак И. Б.* Вопросы философии, 1, 1975.
3. *Маркс К.* Из ранних произведений. М., 596, 1956
4. *Маркс К.* и *Энгельс Ф.* Сочинения, 20, 102.